

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՆ ԱՐԴԻ ՄԱՍՈՒԼՈՒՄ

ՁԼՄ կապակցությունը համեմատաբար վերջին շրջանում ընդունված եզրույթներից է: Այն ընդգրկում է տեղեկատվության երեք հզոր միջոցները՝ մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը: Լինելով զանգվածային տեղեկատվության և քարոզչության հիմնական միջոցներից մեկը՝ մամուլը նաև քաղաքական պայքարի հզոր գեներ է: Արդի մամուլում այսօր լայնորեն կիրառվում են փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող կայուն, բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություններ՝ դարձվածքներ, որոնք իրավամբ կարելի է լրագրողական ամենախոցելի գեները համարել: Դրանք իրենց պատկերավորությամբ ոչ միայն ավելի արտահայտիչ ու կենդանի են դարձնում լրագրողի ասելիքը, այլև ազատում այն չորությունից ու միապաղաղությունից:

Այսօր արդեն ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց զանգվածային լրատվության միջոցների, որոնցում իր առանձնահատուկ տեղն ունի մամուլը: Մեզ վիճակված է ապրել նաև հեռահաղորդակցության տեխնոլոգիաների սրընթաց զարգացման շրջանում, որի արդյունքում ձևավորվել է նաև էլեկտրոնային փոստը, ինչպես նաև վերջին տարիներին կյանք ներխուժած, հիրավի հեղափոխական նշանակություն ունեցող համացանցը, որը հնարավորություն է տվել համակարգչի օգնությամբ տեղեկանալ աշխարհում տեղի ունեցող ցանկացած իրադարձության, ստանալ ամենաանհավանական տեղեկատվությունն աշխարհի ցանկացած վայրից ու բնագավառից: Համացանցի շնորհիվ տարածական այս անսահմանափակությունն էլեկտրոնային մամուլի զարգացման մի հզոր խթան է, որով կտրուկ մեծանում է մամուլի հնարավոր ընթերցողների թիվը, ինչն էլ, իր հերթին, նպաստում է տեղեկատվության արագ և համակողմանի տարածմանը:

Մամուլը մեծապես նպաստում է նախառաջարկաբար ստացմանը, քանի որ լեզվի զարգացումը նրանում տեղի ունեցող անխուսափելի փոփոխությունները մեծափոփարձան ազդվում են հենց այստեղ:

Անշուշտ, լրագրային ոճն ունի իր առանձնահատկությունները: Թեև լրագրային խոսքը հիմնականում գրավոր է՝ ավելի մշակված ու կանոնակարգված, բայց, նայած հոդվածի ոգուն ու բնույթին, այն հաճախ թոթափում է գրքայնությունն ու ներառում կենդանի և ժողովրդախոսակցական լեզվի ու ոճի տարրեր՝ դարձվածքներ, առածներ ու ասացվածքներ, թևավոր խոս-

քեր ու արտահայտություններ¹: Բհարկե, այս դեպքում շատ կարևոր է նաև լրագրողի, հոդվածագրի ճաշակը, լեզվական իմացությունը, ժողովրդական բառ ու բանին ծանոթ լինելու աստիճանը:

Դարձվածքը, որն առ այսօր մնում է ընդհանուր լեզվանաբության վիճելի և վերջնականապես չհիմնավորված հարցերից մեկը, իր ծագմամբ գալիս է դարերի խորքից: Դարձվածաբանության պատմությունը, սակայն, խոր արմատներ չունի: Ռուսական լեզվաբանության մեջ այս ուսմունքով սկսել են զբաղվել 18-րդ դարի կեսերից՝ ֆրանսիացի լեզվաբան Շառլ Բալլիի աշխատությունների լույս տեսնելուց հետո: Բալլին լեզվում եղած բառակապակցությունները բաժանեց երկու խմբի՝ ազատ և կայուն: Կայուն բառակապակցությունները նա անվանեց դարձվածային միավորներ, որոնց բաղադրիչներն այս կամ այն պատճառով կորցրել են իրենց ինքնուրույնությունը և տվյալ կապակցության մեջ ձեռք բերել այլ իմաստ:

Լեզվաբանության մեջ տարակարծություններն ակնբախ են հատկապես դարձվածքի սահմանների ճշգրտման հարցում, որը դարձվածաբանության հանգուցային հարցն է: Սրա վերաբերյալ լեզվաբանության մեջ առաջացել են երկու հակադիր տեսակետներ՝ դարձվածք լայն ըմբռնմամբ և դարձվածք՝ նեղ ըմբռնմամբ:

Դարձվածքը լայն իմաստով ըմբռնող տեսաբանները (Վ. Վինոգրադով, Վ. Արխանգելսկի, Ն. Շանսկի, Ա. Ռեֆորմատսկի, Ա. Եֆիմով և այլք) դարձվածքներ են համարում լեզվում եղած բոլոր կայուն բառակապակցությունները, այդ թվում՝ հարադրավոր բայերն ու գոյականները, բաղադրյալ շաղկապները, եղանակավորող բառերն ու ձայնարկությունները, ինչպես նաև բոլոր առածներն ու ասացվածքները, անեծքներն ու օրինանքները, թևավոր խոսքերն ու իդիոմատիկ արտահայտությունները, անգամ՝ հեղինակային արտահայտություններն ու զրական կլիշեները (ժուկով ժամանակով, լինում է, չի լինում, աստված մի արասցե, մեկնաբանություններն ավելորդ են, լռությունը համաձայնության նշան է և այլն): Դարձվածքը նեղ իմաստով ըմբռնող տեսաբանները դարձվածք են համարում միայն իդիոմները: Կարելի է ասել լեզվաբանության պատմության ընթացքը դեռ վերջնականապես չի հաստատել դարձվածքի ըմբռնումներից մեկն ու մեկը:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածք տերմինն առաջին անգամ հանդիպում է անվանի հայագետ Արսեն Այտընյանի «Քննական քերականություն» գրքում, որն օգտագործվում է որպես ոճին զուգահեռ տերմին²: Դարձվածքների (ոճերի) անվան տակ Այտընյանը հասկանում է միայն

¹ Ճմուռ. Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 156:

² Ա. Այտընյան, Քննական քերականության աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի հանդերձ ներածութեամբ և հանելուածով, Վիեննա, 1866, էջ 317:

հարադրական բայերը, ինչպես մըտիկ ընել, հաւատք ընծայել, կծիկ դնել, թև-թիկունք ըլլալ և այլն:

Մանուկ Աբեղյանը նույնպես դարձվածքները դիտում է զուտ հարադրական բայերից առաջացած գոյացություններ: Նա դարձվածքները համարում է բառերի նորիմաստ կապակցություններ և որոշակիորեն սահմանազատում սովորական իմաստ ունեցող հարադրություններից: Աբեղյանը բերում է հետևյալ օրինակները՝ ձեռք բաշել, ձեռք բերել, երես թեթել, երես տալ և այլն³:

Հայոց լեզվի դարձվածաբանության համեմատաբար ծավալուն ուսումնասիրությամբ առաջին անգամ զբաղվել է Արմենակ Մուրվալյանը⁴: Դարձվածք տերմինն Ա. Մուրվալյանի համար նշանակում է ընդհանրապես կայուն բառակապակցություն: Դարձվածքներն այլաբանական իմաստով կայուն բառակապակցություններ է համարում Ե. Գևորգյանը. «Փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող ամեն մի կայուն բառակապակցություն կոչվում է դարձվածք: Փոխաբերական լինելու պատճառով դարձվածքի փաստացի իմաստը չի համընկնում նրա բաղադրիչների առանձին-առանձին արտահայտած իմաստներին...»⁵:

Դարձվածքները կայուն և ամբողջական բառակապակցություններ է համարում Լ. Եզեկյանը. «Դարձվածքը փոխաբերական-այլաբանական միասնական իմաստ ունեցող կայուն, բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություն է... դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրը կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն, այսինքն տվյալ դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստն այդ բաղադրիչների մեխանիկական գումարը չէ»⁶: Նա, հետևելով ռուս լեզվաբանության մեջ իշխող տեսակետներին, մասնավորապես Վինոգրադովի դասակարգմանը, դարձվածքները բաժանում է երեք խմբի՝ *դարձվածաբանական սերտաճում* (իմաստային տեսակետից անբաժանելի կապակցություններ, որոնց բաղադրիչները կորցրել են իրենց հիմնական իմաստն ու վերաիմաստավորվել, ինչպես՝ գլխի ընկնել, սիրտը շահել, երես առնել, աչքով տալ և այլն), *դարձվածաբանական միասնություն* (այս խմբի մեջ մտնող դարձվածքները թեև իմաստաբանորեն անբաժան, բայց, ի տարբերություն վերը նշվածների, սրանց արտահայտած ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին փոխաբերական

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 151–153:

⁴ Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959:

⁵ Ե. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, էջ 17:

⁶ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 181:

իմաստներով: Մրանք հիմնականում պատկերավոր արտահայտություններ են, ինչպես՝ վիզ ծոել, երես դարձնել, աչք գցել, արյունը թափել, զլխին տալ և այլն: Այս տեսակ դարձվածքները կոչվում են նաև *իդիոմներ* կամ *իդիոմատիկ արտահայտություններ*), *դարձվածքային կապակցություն* (դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստն ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ բառերի իմաստներից: Այս խմբի դարձվածքների բաղադրիչները, փաստորեն, պահպանելով իրենց իմաստային ինքնուրույնությունը, իրենց կապերով մնում են կախյալ վիճակում, և բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով, ինչպես հոնքերը կիտել, գլուխը կախել, ատամները սրել, կանաչ ճանապարհ և այլն):

Որոշ լեզվաբաններ տարբերակում են նաև չորրորդ խումբը՝ դարձվածքային արտահայտություններ, երբ դարձվածքի ընդհանուր իմաստն ամբողջապես բխում է այն կազմող բաղադրիչների բառային իմաստներից:

Ըստ Ն. Բադիկյանի դարձվածքը երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ միտք արտահայտող, վերաիմաստավորված, պատրաստի վերարտադրելի կայուն բառակապակցություն է կամ նախադասություն⁷: Այսպիսով, դարձվածքների ամենաբնորոշ գիծը փոխաբերականությունն է: Եթե դարձվածքը չունի փոխաբերական իմաստ, ապա այն սովորական, ազատ, ոչ կայուն բառակապակցություն է: Փոխաբերական ոճական հնարի շնորհիվ ժողովուրդն իր ասելիքն ավելի պատկերավոր ու խորիմաստ է դարձնում. դրանով աշխարհի իրերն ու երևույթները ներկայացվում են ոչ իրենց սովորական հատկանիշներով, այլ այլաբանորեն՝ դրանց հաղորդելով նոր երանգներ⁸:

Ըստ իրենց գործառության ոլորտների՝ դարձվածքները մի դեպքում իմաստավորված կերպով նշում են առարկան, փաստը, երևույթը, սրանց հատկանիշները, իսկ մյուս դեպքում դատողություններ են անձերի, առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների վերաբերյալ: Ըստ այդմ էլ դրանք բաժանվում են երկու մեծ խմբի: Առաջին դեպքում հանդես են գալիս անվանողական արժեքով և համարժեք են բառերին, իսկ երկրորդ դեպքում հաղորդակցական արժեք ունեն և հարաբերակից են նախադասություններին: Դարձվածային միավորը կամ դարձվածքը նույնպես ձևով կամ ձևականորեն հարադրություն է: Դարձվածքների զգալի մասը հարադրական բարդություններին նույնանում են նրանով, որ դարձվածքը հիմնականում նույնպես ունի մեկ բառի արժեք, կազմված է մեկից ավելի բաղադրիչ բառերից, որոնք պահպանում են իրենց բառային շեշտը⁹:

⁷ Ն. Բադիկյան, Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 10:

⁸ Նույն տեղում, էջ 19:

⁹ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, էջ 298:

Դարձվածքների մեծ մասը ժողովրդական ծագում ունի: Դրանք նախ առաջանում են ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում, ապա, գրողների, լրագրողների ու անհատների կողմից մշակվելով, աստիճանաբար դառնում համագործածական: Այս ճանապարհով զրական լեզու են անցել հազարավոր դարձվածքներ:

Դարձվածքների մի ստվար զանգված են կազմում մարդու մարմնամասերի անվանումներով կազմված կապակցությունները, որոնց ճնշող մեծամասնությունը ժողովրդախոսակցական է: Այս տեսակ դարձվածքները խոսքը գունագարդելու, խոսքին հուզառճական լիցք տալու հետ միաժամանակ մարդկային հարաբերությունները, թերաթոյնները, բացերն ու արատները ծաղրելու և խարազանելու անփոխարինելի միջոցներ են, ուստի և լայնորեն օգտագործվում են մամուլում: Հաճախված են հատկապես *աչք, գլուխ, վիզ, բերան* բառերով հարադրված դարձվածքները: Բերենք անվանողական և հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքների օրինակներ տպագիր և էլեկտրոնային մամուլից:

Աչք գոյականով հանդիպում են *աչքի գեղան* (այսինքն՝ ակնհայտ թերություն) (Օմբուղսմենն իր *աչքի միջի գեղանը* չի նկատում («Հրապարակ»)), *աչքի փուշ* (մարդկանց բացասական վերաբերմունքին արժանացած որևէ բան), (Առաջին օրվանից քանդակը դառնում է բնակիչների *աչքի փուշը* «Հետք»)), *աչք ունենալ* (զաղտնի կամ բացահայտ ուրիշին պատկանող ինչ-որ մի բանի ձգտել), (Նախկին պաշտոնիս վրա *աչք ունես* («Հայկական ժամանակ»)), *աչքը մտնել* (հաճոյանալ), *աչքը հանել* (...արի «Երկխոսենք», որպեսզի մերչուզոգների... *աչքը հանենք* («7օր»)), *աչքին երևալ*, բարբառային *աչքին թոզ փչել* (...տնտեսության զարգացում ասելով սկզբնական փուլում պատկերացնում էր... ու մարդկանց *աչքին թոզ փչելը* («7օր»)), *աչքի անցկացնել* (...*աչքի անցկացրեք* աղոթքնականական կայքերն ու լրագրերը («Հրապարակ»)) և այլն:

Գլուխ գոյականով խելքը *գլխին* (*կարգին*) (...որ իրեննեղություն չտա գոնե *խելքը* *գլխին* բացատրություն *տալ* ժողովրդին... («Հրապարակ»)), մեկի *գլխին* տեղունենալ (Օլիգարխի վարչախմբի *գլխին տեղանք* («Էկոլուր»)), *գլուխը մտցնել* (Կարգունոն հաստատողը պետք է զինվորի կողքին քնող սպանիկնի, հոգեբանը այն մարդը, որ կարգազանցի *գլուխը* կկարողանա մի հասարակ ճշմարտություն *մտցնել*...), *գլուխ գովել* («*Գլուխ գովելու* տեղ չունենք» («Առավոտ»)), *գլխին տալ* (*զղջալ*), *գլխին նստել*, բարբառային *գլուխը մահու տալ* (...այնպես վարվիր, որ կողքիդ ծառայողը պատրաստ լինի *գլուխն էլ մահու տալ*, միայն քեզ հեռացնի թշնամու կրակի տակից («Հրապարակ»)), ժուրգոնային *գլխին սարքել* (*Գլխին գործ են սարքում* («Երկիր»)), այլ կիրառություններ՝ *գլուխ գլխի տալ* (մի քանի հոգով մտա-

ծել), գլխիտակփափուկբարձրել (սին հույսերով խաբել), գլուխ կանգնել (ղեկավարել) և այլն:

Բերան գոյականով անվանողական և հաղորդակցական բնույթի դարձվածքներ բերանը բաց (Եվ մնում է միայն *բերանը բաց* լսել հայտնությունները, որոնք վերաբերում են նրա իրական աշխարհընկալմանը («Հայկական ժամանակ»), բերանը փակել (լռեցնել) (Կոչ ենք անում դատարաններին չտալ, որ այդ կերպ փակեն նրանց բերանը («Հրապարակ»), դրան հոմանիշ՝ բերանը կողպել (Այսինքն, իր աշխատանքը նախարարի բերանը ճիշտ ժամանակին կողպելն է («Հրապարակ»)), բերանը բացել (բարկանալ, հայհոյել):

Չնայած հայերենում դարձվածքների զգալի մասը հանդես է գալիս իր մշտական կայուն բառաբերականական ձևով, ինչպես՝ գլուխ տալ, գլխի ընկնել, աչքի լույս, աչք դնել, աչք զցել և այլն, սակայն երբեմն դրանք ունենում են նաև իրենց բառաբերականական, բարբառայինկամ փոխառյալ տարատեսակները, ինչպես՝ գլուխը տաքացնել և կատարը տաքացնել, բերանը փակել և բերանը կողպել և այլն:

Վիզ բառով հանդիպում են հետևյալ դարձվածքները՝ վիզ ծոել (ստորանալ) (Խոսեց մարգարյին բաժանմունքների մասին, երբ ղեկավարները ստիպված են *վիզ ծոելու* տեղական իշխանություններից գումար խնդրել իրենց հիմնադրամների համար («Հայկական ժամանակ»)), ժարգոնային կիրառություններ՝ վիզ դնել (մոլեգին ինչ-որ բանի ձգտել) Ուշագրավ է, որ *վիզ դրած* ուզում է շեշտել իր տարբերությունը նախորդներից ու դրանով նաև իր առավելությունը, բայց ամեն անգամ ստացվում է ինչպես միշտ («7օր»):

Մարդու մարմնամասերի անուններով կազմված այլ դարձվածքներ խելքի տուպրակ (... պարբերաբար ժողովրդի միջից բացականչություններ էին լսվում. *«խելքի տուպրակ ա, է»...* (Հրապարակ)), ատամները սեղմել (զայրանալ). (*Ատամները սեղմած* արժվեցդեպիդուրը («Հրապարակ»)), ձեռք բերել, մեկի ձեռքում լինել, լեզու գտնել, սեփական մաշկի կամ կաշվի վրա զգալ, հոգի տալ (Տիգրան Կարապետյանը շարունակում է *հոգի տալ* ժողովրդի համար («Երկիր»)) և այլն:

Անշուշտ, առանց այս տեսակ դարձվածքների հնարավոր չէր լինի նման դիպուկ բնութագրումներն անել:

Արդի մամուլում հանդիպում են նաև հունական ծագում ունեցող և աստվածաշնչյան դարձվածքներ, որոնք թարգմանաբար անցել են նաև աշխարհի շատ գրական լեզուների: Այս տեսակ դարձվածքները, ի տարբերություն նախորդների, խոսքին վեհություն ու հանդիսավորություն են հաղորդում և ավելի հատուկ են վերամբարձ ոճին:

Ժամանակակից պարբերականներից բերենք այդպիսի օրինակներ՝ Միգիփոսի աշխատանք (այսինքն՝ անիմաստ, ապարդյուն մի գործ. համաձայն առասպելի՝ Միգիփոսը քարը տառապանքներով հասցնում էր լեռան կատարը, իսկ այն կրկին ու կրկին ցած էր զլորվում) (Կարեկցում ես, քանի որ արածները գրեթե *Միգիփոսի աշխատանքին* հավասարագոր գործ են («Հայոց աշխարհ»), դամոկլյան սուր (այսինքն՝ մշտական սպառնալիք. ըստ հունականավանդության՝ երբ Դամոկլեսը մեկ օրով ուզեց արքա դառնալ, և արքան զահեղ զիջեց նրան, հանկարծ նկատեց, որ քարակ թելով մի սուր է կախված գլխավերևում: Արքանբացատրեց, որ զահի վրա, այո, ուժկունեւա, բայց պետք է մշտապես գիտակցի, որ կարող է նաև չնախատեսված վտանգների ենթարկվել) (Թուրքիայի արտագործնախարար Ահմեդ Դավութօղլուն անցյալ շաբաթ հայտարարեց, որ բանաձևը *դամոկլյան սրի* նման կախված է մեր գլխին («Հետք»), դանայան տակառ (անօգուտ, անպտուղ, տաժանակիր աշխատանք, միաժամանակ՝ անվախճան, անվերջանալի ու չլքված դատարկություն: Հստ հունական դիցաբանության՝ այն դատարկ տակառ էր, որի մեջ ջուր լցնելու տաժանակիր աշխատանքի դատապարտվեցին դանայացի ոճրագործ 49 աղջիկները, որոնք սպանեցին իրենց ամուսիններին) (Իվերջո, օրաթերթը *դանայան տակառի* նման կլանում է մեր մտքերը, աշխատանքը, ... («Հրապարակ»), *աքիլլեսյան գարշապար (այսինքն՝ խոցելի տեղ: Հստ հունական դիցաբանության՝ Աքիլլեսը, որին մայրն օձել էր սուրբ գետի ջրերով, խոցելի էր միայն կրունկից, քանի որ մայրը նրան կրունկից էր բռնել)* (Պաշտպանության կենտրոնը՝ *աքիլլեսյան գարշապար*. Հայաստան-Էստոնիա 1:1 («panorama.am»)) և այլն:

Մամուլում հանդիպում են նաև աստվածաշնչյան ծագում ունեցող դարձվածքներ, ինչպես՝ քավության նոխազ (այսպես են անվանում այն մարդկանց, ովքեր իրենց վրա են վերցնում ուրիշի մեղքերը, երբ հանգամանքների բերումով ստիպված են լինում պատասխան տալ ուրիշի հանցանքի փոխարեն) (Նա կարող է լինել կոռուպցիայի դեմ պայքարի պատրանք ստեղծելու *քավության նոխազներից* հերթականը («7օր»), գայթակղության քար (այլաբանորեն նշանակում է հրապուրվելու առարկա) («Թանկագի ն Աննա, 2008 թվականի փետրվարի 26-ը *գայթակղության քար* է դարձել... («Հայկական ժամանակ»), ոգու սով (Ես ձեզ եմ ասում՝ *կգա ոգու սով* («Երկիր»)) և այլն: Դարերի ընթացքում ժողովուրդը գույներն էլ է իմաստավորել՝ մի գույնի հետ կապելով բախտավորություն ու կյանք, մյուսի՝ հետ՝ դժբախտություն ու մահ, և, այդպիսով, գույների անվանումները դարձել են կյանքի այս կամ այն կողմի խորհրդանիշ¹⁰:

¹⁰ Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 27.

Արդի մամուլում հանդիպում են նաև գունանուններով հարադրված դարձվածքներ:

Բերենք օրինակներ՝ սև ամպեր (....Աղբբեջանցի նախարարի գլխին սև ամպեր են *կուտակվել* («Այսօր»), ցանաչլույս (այսինքն՝ անարգել ճանապարհ) (....փողուների, ազդեցություն ունի, կարողանում է իր բիզնեսի ե իր օբյեկտների համար *«կանաչլույս»* քաջել («Առավոտ»)), վարդագույն ակնոց (Մեր ժողովուրդը հանել է *վարդագույն ակնոցը* («Այսօր»)) և այլն:

Որոշ դարձվածքներ ժամանակի ընթացքում իմաստային փոփոխության են ենթարկվում: Օրինակ ջրի գին արտահայտությունը ժողովրդական ստուգաբանությամբ նշանակում է էժանագին, չնչին գին) (....*ջրի գնով* օտարների տվեցին մեր երկրի բոլոր ռազմավարական և ոչ այնքան ռազմավարական ձեռնարկությունները («ԶԲ»): Բայց սա առաջ էր: Այսօր, երբ ջուրն արդեն շատ «որոշակի» գին ունի, այս կապակցությունը կորցնում է նախկին իմաստը (....ջուրն այլևս ջրի գին ունեցող չի կարելի համարել («Հայոց աշխարհ»)):

Բերենք ջուր գոյականով կազմված դարձվածքների այլ օրինակներ ջրիերեսինմալ (այսինքն՝ չուժովելու, ընդհատակ չանցնելու, այս դարձվածքի հիմքում պարագոքս կա արտասովոր դատողություն, որ չի համապատասխանում ընդունված տեսակետին) (Անշուշտ, էստեղ քաղաքական շահեր կան թե՛ ընտրությունների հետ կապված, թե՛ *ջր իերեսին մնալու* փնդիր կա («Հրապարակ»)), մեկի ջրադացին ջուր լցնել (այսինքն՝ խրախուսել) (....ըստ էության, այն ժամանակ ինքն էր Աղբբեջանի *ջրադացին ջուր լցնում* («7օր»)) և այլն:

Այլ դարձվածքներ մամուլից խաչ քաշել (մի բանից հրաժարվել, հույսը կտրել) (Ռուսաստանը *խաչ քաշեց* Քաղաֆիի վրա («Սլաք»)), աթոռը պահել (....*աթոռը պահելու* նպատակով.... փաստացի գնաց հեղափոխական բայերի («7օր»)), փոսից հանել (վերականգնել իմաստով) (....լծվել է գյուղը *փոսից հանելու* գործին («7օր»)), լուսանցք գտնել, վերջակետ դնել, խիղճը փրկել, հողին հանձնել, հողին հավասարեցնել և այլն:

Մամուլը նաև կենդանի, գործուն, հասարակական գործառույթ ունի, որի արդյունքում այստեղ առկա են նաև մեծ քանակությամբ ժարգոնային բառեր, զոեհկաբանություններ, փոխառություններ ու նորաբանություններ:

Հայտնի է, որ բառապաշարի ժողովրդախոսակցական շերտում և հատկապես բարբառներում խոսակցական բառապաշարն ուղեկցվում է այնպիսի բառերով ու դարձվածքներով, որոնք ստեղծվել և գործածվում են հասարակության մեջ սոցիալական տարբեր խավերի ու խմբավորումների կողմից: Ինչ խոսք, բառային այդպիսի միավորների օգտագործումը խրախուսելի չէ, բայց այսօր արդի մամուլում ոճական նպատակներով,

կոլորիտ ստեղծելու, հերոսներին բնութագրելու, նրանց խոսքը ոճավորելու համար հաճախ անհրաժեշտություն է դառնում դիմել նաև այդ տեսակ դարձվածքների կիրառությանը: Բերենք այդպիսի օրինակներ՝ դրբիտակ հայտնվել (ՈՎ է սրանից ամենաշատը ուրախանում. դարձյալ նա, ով պիտի տափ աներ այս բանակի *դրբի տակ նս մեկ անգամ չհայտնվելու* համար («Հրապարակ»), վարի գնալ (Մտքով փորձում էի հաշվել, թե Արագածոտնի Ավան համայնքում քանի ոչխար է *վարի գնալու* վարչապետական այցին ընդառաջ («Երկիր»)), խաղեր տալ (...մարդ, ով տաս տարի շարունակ ունեցել է դրամի փոխարժեքի հետ *խաղեր տալու* մրցույթով իրավունք («7օր»)), ռասկրուտկա անել (կապակցության գերադաս անդամն օտարաբանություն է) (Պատահականաչէ, որ մեկ կենտրոնից ղեկավարվող հեռուստաալիքներն ու Ահարոն Աղիբեկյանը սկսել են *«ռասկրուտկա» անել* ՀԱԿ ղեկավարին՝ որպես միակ ու հզոր ընդդիմություն («7օր»)) և այլն:

Ժողովրդախոսակցական ռճի դարձվածքներ վրա տալ (Եվ ինչու է են ՀԱԿ-ի լրատվամիջոցներն ու բլոգերները «վրա տալիս», երբ որևէ մեկը հայտնում է իրենցից ինչ-որ ձևով տարբերվող, բայց ակնհայտորեն ընդդիմադիր տեսակետ («Առավոտ»)), թքած ունենալ (Նա թքած ունի նաև իր աղմկոտ զոմբիների վրա («7օր»)) և այլն: Հայտնի է, որ ժողովրդախոսակցական ռճում սովորական են նաև օտարաբանությունները, որոնք հիմնականում վերցրել ենք հարևան ժողովուրդներից, ինչպես՝ մեյդան ընկնել (...ամենաանհեթեթ նախաձեռնություններով *մեյդան ընկնելու* «մանիա» ունի («ԶԻ»)):

Հայերենում դարձվածքները սովորաբար բաղկացած են լինում երկուսից մինչև վեց, սակավ դեպքերում՝ յոթ բաղադրիչներից: Սովորաբար բաղադրիչների թվի ավելացման հետ պակասում է դարձվածքների քանակը: Ամենից շատ են երկանդամ դարձվածքները, ինչպես, օրինակ, գլուխ կոտրել, սիրտ տալ, սիրտը բաց, կրակի գին, կրնկի վրա և այլն: Համեմատաբար քիչ են եռանդամ դարձվածքները՝ խոսքը կոլ տալ, խոսքի տակ մնալ (պատասխան չտալ), եռացող կաթսայի ոեժիմ և այլն:

Բառերի նման դարձվածքներն էլ լինում են մենիմատ և բազմիմատ: Օրինակ *տեղը բերել* կապակցությունը կարող է նշանակել՝ ճանաչել (...ասում է մեկը, ում և ձայնն է ծանոթ, և դեմքը, բայց չեմ կարողանում *տեղը բերել* («ԶԻ»)), չիմանալ ում հետ իրականում գործ ունես (*տեղը չեն բերել* Ռոբերտ Քոչարյանին («Թերթ»)): Չայն տալ կարող է նշանակել՝ պարզապես կանչել, ձայնի իրավունք տալ խորհրդարանում կամ մի այլ տեղ, և, որ այսօր հաճախ է հանդիպում, ընտրել ինչ-որ թեկնածուի (Ժողովրդի մի սովոր գանգված չի ցանկանում *ձայն տալ* ԼևոնՏեր-Պետրոսյանին («7օր»)):

Առածներն ու ասացվածքները, որպես ժողովրդական բանահյուսության տեսակներ, խոսքի մեջ նույնպես հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ: Այն առածներն ու ասացվածքները, որոնք փոխաբերական–ընդհանրական իմաստ են արտահայտում, իրենց կառուցվածքով նախադասություն կամ բառակապակցություն են, տրամաբանորեն համապատասխանում են կամ դատողությանը, կամ հասկացությանը և դասվում են դարձվածքային արտահայտությունների շարքը¹¹:

Առանձին խումբ են կազմում այն դարձվածքները, որոնք իրենց կազմությամբ և իմաստով համազոր են նախադասությանը: Տրամաբանորեն դատողություն, շարահյուսորեն նախադասություն ներկայացնող այդ կարգի դարձվածքների իմաստը փոխաբերական է, պայմանավորված չէ նախադասության կազմի մեջ մտնող բառերի բառային իմաստներով: Օրինակ *Այդ կինն մարդիկ արդեն տեսել են* («*neonews.am*»), էլ մի ասի, Պապին մի բան գիտի (Զուրիկները նրա ասածը կրկնվելն «*Պապին մի բան գիտի*» բանաձևի միջոցով («*7օր*»)), Աստված գիտի (Մենք հետաքրքրվեցինք, թե ինչքան է տևելու ծոմը. «*Աստված գիտի*, ես շարունակելու եմ այնքան ժամանակ, քանի իմ առողջությունը ներում է («*Հրապարակ*»)), Մենք փոքր ածու եևք, Նոր է իջել երկնքից և այլն:

Հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքների մեծ մասը միակազմ նախադասություն է, ինչպես գլխին քարոզ կարդալ (Փաստորեն, հիմա եկել է գյուղացիների *գլխին քարոզ կարդալու* ժամանակը («*7օր*»)), անարգանքի սյունին գամեցինք, իսկ այսօր ազգի դավաճաններին... տրամադրում են լավագույն հեռուստաալիքները («*Հայոց աշխարհ*»)), ուրիշի ձեռքերով շագանակներ հանել կրակից (...մեզ հետ զրույցում չէին կարողանում թաքցնել իրենց ուրախությունն ու բերկրանքը, որ կարող են նրա ձեռքերով շագանակներ հանել կրակից ու հնարավորինս փակել թերթերի բերանը («*Հրապարակ*»)), մի ձեռքով երկու ձմերուկ բռնել (...Մյուս կողմից Ռուսաստանին անհրաժեշտ էր Ադրբեջանի գազը. *մի ձեռքով երկու ձմերուկ են ցանկացել բռնել* («*Հետք*»)), այլ օրինակներ՝ սցենարն ավարտին հասցնել, շարունակ խմոր հունցել, տեղում դոփել, պատմության անիվը հետ շրջել, բերանը ծամոն գցել, այրել վերջին կամուրջները (այսինքն հետդարձի ճանապարհի չթողնել) («*Երբ փորձում են այրել վերջին կամուրջները* ընդդիմության նկատ, որը նույնն է, ՀԱԿ-ի հետ... («*Ազատություն*»)):

Մամուլում երբեմն հանդիպում են այնպիսի դարձվածքներ, որոնցում լրագրողները որոշ փոփոխություններ են կատարում՝ սուտջնորդվելով

¹¹ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, էջ 305:

սեփական նպատակադրումներով: Փոփոխությունը վերաբերում է ինչպես դարձվածքի իմաստի ընդգծմանը, այնպես էլ դարձվածքը կազմող բաղադրիչների ավելացմանը կամ կրճատմանը՝ կրկին ելնելով հոդվածից բխող հարցերի բնույթից, ինչպես՝ «Որտեղ կաց, այնտեղ լաց» («Հայկական ժամանակ»), «Յոթ երգ գիտի, յոթն էլ «Հայկական վտանգի» մասին» («Ազգ»): Եթելուում, ուրեմն համաձայն է («Հայկական ժամանակ») և այլն:

Անփոխարինելի է դարձվածքի դերը որպես վերնագիր. որպես վերնագիր ճիշտ ընտրված դարձվածքը տարողունակ կերպով է ներկայացնում հոդվածի բովանդակությունը, բացահայտում լրագրողի վերաբերմունքը սեփական հոդվածում առկա երևույթների կամ անձերի, մարդկային փոխհարաբերությունների նկատմամբ: Լրագրողները երբեմն անփոփոխ կերպով որպես վերնագրեր օգտագործում են պատրաստի դարձվածքներ, երբեմն դրանց բաղադրիչ մի մաս խոսքի ոճավորման նպատակով, ինչպես «Ճաշակին, իհարկե, ընկերչկա» («Առավոտ»), «Ջրի բերածը բուռն է կլցվի» («Իրատես դե ֆակտո»), բարբառային «Մուրազը մնաց փորը» («ԶԻ»), «Դարձյալ նույն երգն է երգում», «Որտեղ է թաղված շան գլուխը հարցի պատասխանը», «Վերականգնում, որ շտկեց երկրի մեջքը» («Երկիր») և այլն:

Մեր օրերում տարբեր կուսակցությունների կամ անհատների կողմից լույս տեսնող մի քանի տասնյակից անցնող բազմաբնույթ լրագրերը, ըստ իրենց ուղղվածության ու պատկանելության, մեր դարձվածքային շտեմարանից ընտրում են իրենց թերթերի ուղղվածությանն ու հոդվածների բնույթին համապատասխան դարձվածքներ, դրանցով ոճավորում իրենց խոսքը, ներգործում ընթերցողների վրա, ընդգծում ասելիքի կարևորությունն ու ավելի հետաքրքիր դարձնում թերթերը: Անշուշտ, լրագրողից մեծ վարպետություն է պահանջվում, որ դարձվածքները գործածի տեղին ու իմաստին համապատասխան: Երբեմն հոդվածագիրները փորձում են ինչոր իրավիճակների նկարագրության նպատակով ստեղծել սեփական պատկերավոր արտահայտությունները խոսքն ավելի տպավորիչ ու ներգործող դարձնելու համար, և քիչ չեն դեպքերը, երբ դա հաջողությամբ է պսակվում, դառնում համագործածական և վերածվում դարձվածքների:

Phrases In Modern Press

Mass media concept is relatively new accepted term. It includes three powerful means of information, press, radio and television. Being one of the means of mass information and propaganda, press is also a very powerful weapon of political struggle.

Nowadays stable words of metaphorical, allegorical meaning, word integrals and ready to reproduce phrases are widely used in modern press, and these phrases can be rightfully considered the most vulnerable weapon in the media. They not only make journalist's speech more expressive and live but also help them to get rid of monotony and formality.